ԼԵՀԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ
ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՀ ՎԱԼԵՆՍԱՅԻՆ

Խ. Հայաստանի անկախացմանը ձգտող Ազգային ինքնորոշում Միավորումը մեծ ուշադրությամբ է հետևում իր արդար իրավունքների համար լեհ ժողովրդի պայքարին:

Համերաշխության արհմիության ստեղծումով սկսվեց վարշավյան դաշնակիր երկրների ժողովուրդների քաղաքական նոր, ավելի հասուն պայքարի սկիզբը: Ձեր գլխավորած այդ կազմակերպությունը իր գոյության փաստով արդեն զորավիգ է ոչ միայն վարշավյան դաշնակցության մեջ մտնող ազգերի ընկերային, մարդկային ու տնտեսական իրավունքներին: ,,Համերաշխությունը,, ըստ էության ստեղծել է նաև ազգերի ինքնորոշման իրավունքի պաշտպանությանը, որի համար պայքարում է ազգերի ինքնորոշման իրավունքի պաշտպան ԱՆԴՐԱՆԻԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ-ում՝ Ազգային Ինքնորոշում Միավորումը:

,,Համերաշխություն,, արհմիության օրինականացումը ընում է Մոսկվայի ենթակայության տակ ընկած բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև՝ հայ ժողովրդի արմատական շահերից, քանզի մեծապես կնպաստեր դեմոկրատիայի ընդլայնմանը վարշավյան պայմանագրի երկրներում:

Մենք դատապարտում ենք Լեհաստանի կառավարության որդեգրած դիրքը համաշխարհային արհմիության նկատմամբ և պահանջում ենք անհապաղ օրինականացնելու համաժողովրդական այդ կազմակերպությունը:

12 սեպտեմբերի 1988թ.
Երևան

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ ՄԻԱՎՈՐՈՒՄ

ՔՈՒՅՐԵՐ ԵՎ ԵՂԲԱՅՐՆԵՐ

Հայ ժողովրդի ազատամարտի այս շրջադարձային պահին, եթե մենք ճիշտ դասեր չքաղենք մեր ութամյա պայքարի փորձից, և դարձյալ հավատանք մեր շարժումը փակուղի տանող Մոսկվայի հայազգի կամակատարներին, ՍՏԻՊՎԱԾ ՊԻՏԻ ԼԻՆԵՆՔ ՋՈՒՐԸ ՆԵՏԵԼ ՄԵՐ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉ ՍԿՍԵԼ ՆՈՐԻՑ:

Սխալները թույլ չտալու, այսինքն՝ պահը ճիշտ գնահատելու համար

պետք է ապավինենք ոչ թե մեզ տրվող խոստումներին, այլ սառը դատողությանը և ճշմարտությանը: Իսկ ճշմարտությունը և իրողությունը սա է.

ԱՌԱՋԻՆ - Այսօր արդեն բովանդակ հայության համար պարզ է, որ Մոսկվան Արցախը Հայաստանին միավորելու մեր արդարացի պահանջը չի կամենում կատարել:

ԵՐԿՐՈՐԴ - Մոսկվան ոչ միայն ոտնահարեց Արցախի ինքնորոշման իրավունքը, այլև մեր սահմանադրական պահանջին պատասխանեց Սումգայիթով, Մասիսով, Զվարթնոցով, Խոջալուով:

ԵՐՐՈՐԴ - Ութամսյա իրադարձությունների վերլուծությունը մեզ բերել է հետևյալ ԱՆԱՌԱՐԿԵԼԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ. Կրեմլը Արցախի հարցը ուզում է լուծել այնպես, ինչպես լուծեց Արևմտահայաստանի հարցը, ինչպես լուծեց Նախիջևանի հարցը...

Այսինքն՝ ԱՐՑԱԽԸ՝ ԱՌԱՆՑ ՀԱՅԵՐԻ:

Ո՞ՐՆ Է ԱՐՑԱԽԸ ՀԱՅԵՐԻՑ ԴԱՏԱՐԿԵԼՈՒ ԾԱՆԱՊԱՐՀԸ:

ԱՐՑԱԽՈՒՄ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԱՆՁԱՁԵՐԾՈՒՄԸ, որն արդեն ՍԿՍՎԵԼ է:

Ի նկատի ունենալով այս իրողությունները, Ազգային Ինքնորոշում միավորումը հայության դատին է հանձնում հետևյալ հայտարարությունը.

ա/ Արցախահայությունը Լ. Ղարաբաղի մարզային խորհրդի սահմանադրական որոշումով ինքնորոշվել, պաշտոնապես դուրս է եկել Ադրբեջանի կազմից և միացել է Հայաստանին: Հետևաբար Արցախի միացումը Հայաստանին պետք է ճանաչել դե ֆակտո, այսինքն՝ ԿԱՏԱՐՎԱԾ ՓԱՍՏ:

բ/ Քանի որ Խ. Հայաստանի ժողովուրդը բազմաթիվ ժողովներում, հավաքներում և մեկ ամիս տևած հանրաքվեով ՎՃՌԱԿԱՆԱՊԵՍ դատապարտեց, այն է՝ ԱՊՕՐԻՆի ճանաչեց հուլիսի 18-ի որոշումը, ԱԶԳԱՅԻՆ ինքնորոշում Միավորումը կարծում է, որ հայ ժողովուրդը այսուհետև ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՈԼՈՐ ՀԻՄՔԵՐՆ ՈՒՆԻ ԱՐՑԱԽԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍԸ:

գ/ Նկատի ունենալով այն փաստը, որ Մոսկվան ընդունակ չէ կամ չի ուզում վավերացնել արցախահայության ինքնորոշման իրավունքը, որին զորավիգ կանգնեցին նաև Եվրոխորհրդարանն ու ԱՄՆ-ի կոնգրեսը, ԱԶԳԱՅԻՆ ինքնորոշում Միավորումը համոզված է. այսուհետև Արցախի կամ մեր կենսական այլ խնդիրների լուծման համար Մոսկվային դիմելը ԺԱՄԱՎԱՃԱՌՈՒԹՅՈՒՆ է, ուժերի անիմաստ վատնում և հայության ազատա-

մարտը փակուղի մտցնելու գործողություն:

Այս հանգամանքներից ելնելով, Ազգային ինքնորոշում Միավորումը հայությանն է հանձնում հետևյալ ծ Ր Ա Գ Ի Ր Ը.

ԱՌԱՋԻՆ - Արցախի ու Հայաստանի ժողովուրդը ՄԻԱՍՆԱԲԱՐ դիմում են Միավորված Ազգերի Կազմակերպություն ու Եվրոխորհրդարան, նրանց հովանավորությամբ անցկացնելու ՀԱՆՐԱՔՎԵ՝ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ԽՍՀՄ ԿԱԶՄԻՑ ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՈՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻՑ և ատույգ ոչնչացումից փրկելու Մինակ ԵՐԱՇԽԻՔՆ է:

ԵՐԿՐՈՐԴ - ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԱՅՆՔԱՆ ԺԱՄԱՆԱԿ, ՔԱՆԻ ԴԵՌ ԽՍՀՄ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ 5-ՐԴ ԿԵՏՈՎ ՄԵՋ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՉԵՆՔ ՍՏԱՑԵԼ ԵՎ ԽՈՐՀԸՐԴԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԸ ՉԵՆ ՊԱՐՊԵԼ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ:

ԵՐՐՈՐԴ - ՄԱԿ-ից խնդրել շուտափույթ միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու Խորհրդային Միության հայության կյանքի ապահովությունը:

ՍԱ Է ԺԱՆԱՊԱՐՀԸ:

ՈՒՐԻՇ ԵԼՔ ՉԿԱ:

ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Հայ ժողովրդի ութամսյա քաղաքական պայքարը մեզ բերել հասցրել է 72-րդ հոդվածի շեմին: Այդ շեմքը մեր ազգը ոտնակոխել է ոչ թե ինչ որ անհատի կամ քաղաքական կազմակերպության շնորհիվ:

Ոչ: Ազգը ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ շեմին է հասել ինքը, իր ազատամարտի տրամաբանությամբ և մեր բյուրամյա ազատաբաղձ արյան կանչին ունկնդիր: Ուրեմն ենթարկվենք ազգի հավաքական կամքին և քայլենք եթե ոչ ազգի կողքից, ապա գոնե նրա ետևից. Քանզի հակառակ դեպքում ոտնակոխ կլինենք այնպես, ինչպես շատ շատերն այս ութ ամսում:

ԱԶԱՏԱՄԱՐՏԸ ՍԿՍՎԱԾ Է:

Աշխարհում և ոչ մի ուժ այլևս մեր ժողովրդին չի կարող ետ պահել ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ:

ԵՏ ԴԱՐՁԻ ՃԱՄՓԱ ՉԿԱ: ՄԻՄԻԱՅՆ ՀԱՌԱՋ:

ՈՒՐԵՄՆ ՊԱՅՔԱՐ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ:

ՈՒՐԵՄՆ ՀԱՂԹԱՆԱԿ:

ՈՒՐԵՄՆ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ:

22 սեպտեմբերի 1988թ.
Երևան

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ ՄԻԱՎՈՐՄԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ